

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ԵՐԳՉԱԽՄԲԻ ՏԱՍՆԱՄՅԱԿԸ

Տասը տարի առաջ, 1951 թվականի մարտին, հանգուցյալ Գևորգ Զ Կաթողիկոսի կարգադրությամբ, կազմվեց Ս. Էջմիածնի Մայր Տաճարի երգչախումբը՝ բաղկացած 14 երգիչներից և երգչուհիներից։ Երգչախմբի ղեկավար նշանակվեց Հրանտ Գևորգյանը։

Ներկայումս Ս. Էջմիածնի Մայր Տաճարի երգչախումբը բաղկացած է երաժշտական կրթություն ունեցող 40 երգիչներից և երգչուհիներից։

Երգչախումբը, ամեն կիրակի և տոն օրերին, Մայր Տաճարում փոխնիփոխ հաջողությամբ կատարում է և Եկմալյան և Կոմիտասյան պատարագները։



ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ԵՐԳՉԱԽՈՒՄԲԸ

1955 թվականից, Տ. Վազգեն Ա Վեհափառ Հայրապետի գահակալության առաջին իսկ օրերից, Մայր Տաճարի երգչախումբը քանակապես և որակապես զգալիորեն բարելավվեց և դարձավ մի շնորհալի խումբ։

Շնորհավորելով Մայր Տաճարի երգչախմբի տասնամյակը, ցանկանում ենք նրան աշխատանքային նոր հաջողություններ։